Լրատու Newsletter

ԳԷՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ

K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk

Website: www.armenianschool.org.uk

Յունուար 2016
Լրատու թիւ 6

Ողջոյնի Խօսք

ԱՆԻ

ՎԱՆ

ԿԱՐՍ

2015-2016 ուսումնական տարին սկսուեց սեպտեմբերի 6-ին և ահա դեկտեմբերի 13-ին աւարտուեց առաջին եռամսեակը: Վարժարանի համար առաջին եռամսեակը շատ զբաղուած ժամանակաշրջան էր: Մեր ուշադրութեան կենտրոնում ոչ միայն կրթութիւնն է այլև հայեցի դաստիարակութիւնն ու հայրենասիրութիւնը: Մեր ունեցած հնարաւորութեան սահմաններում աշակերտներին ծանօթացնում ենք մեր ժողովրդի պատմութեան, հերոսական անցեալի և հերոսների հետ:

Մասնակցում ենք ՀՀ Գիտութեան և Կրթութեան նախարարութեան և Սփիւռքի նախարարութեան կազմակերպած միջոցառումներին և մրցոյթներին, որպիսզի մեր երեխաները աւելի սերտ կապերով կապուեն մեր հայրենիքի հետ:

ՀՀ Գիտութեան և Կրթութեան նախարարութիւնը կազմակերպել էր Հայոց Ցեղասպանութեան 100 ամեայ տարելիցին նուիրուած <Մէկ դար և աւելին> խորագրով մրցոյթ, որին մասնակցեցին Հայաստանի Հանրապետութեան, Արցախի և Սփիւռքի դպրոցների աշակերտները : Մեր աշակերտները նոյնպէս մասնակցեցին այդ մրցոյթին և իրենց աշխատանքները պարգևատրուացին ՀՀ Գիտութեան և Կրթութեան նախարարութեան պատուոգրով: Թարգմանչաց տօնին նուիրուած հանդէսի ընթացքում ՀՀ դեսպանութեան աշխատակից պրն. Տիգրան Գալստեանը պատուոգիրն յանձնեց դպրոցին:



Վարժարանի աշակերտները, ծնողները, ուսուցիչները և հոգաբարձուները Հոկտեմբերի 28-ին մասնակցեցին Ուեստմինստերեան Աբբայութիւնում ՀՀ դեսպանութեան կազմակերպուած՝ Հայոց Ցեղասպանութեանը նուիրուած յատուկ ձեռնարկին, որտեղ ներկայ էին ՀՀ նախագահը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տէր - Տէր Գարեգին Երկրորդը, Արքայազն Չարլզը և բազմաթիւ այլ պաշտօնեաներ Հայաստանի Հանրապետութիւնից և Մեծ Բրիտանիայից:

Այս Լրատուն ներկայացնելու է 2015- 2016 ուսումնական տարուայ առաջին եռամսեակի ընթացքում Վարժարանում կատարուած աշխատանքները:

Եթէ կունենաք որևէ հարց կամ առաջարկ այս շրջաբերականի բովանդակութեան վերաբերեալ, առանց վարանելու ուղարկէք էլեկտրոնային նամակ՝ E-mail:

armenianschool@hotmail.co.uk

Օգտուելով առիթից շնորհաւորում բոլորիդ Ամանորի և Սուրբ Ծնունդի առթիւ: Մաղթում եմ բոլորիդ քաջառողջութիւն, յաջողու-թիւններ, նպատակների և իղձերի իրականացում: Եւ թող Նոր տարին բերի միայն ուրախութիւն և երջանկութիւն Ձեր բոլորի օջախներում:

Շնորհաւոր Նոր Տարի
և
Սուրբ Ծնունդ

Վերամուտ

Սեպտեմբեր ամիսը ազդարարում է ուսումնական տարվա սկիզբ: Այն նոր գիտելիքներով հարստանալու, իրական արժեքներ ճանաչելու և նոր նպատակներ կյանքին կոչելու սկիզբ է: Սիրելի դպրոցականներ մաղթում ենք Ձեզ բարձր առաջադիմություն, իսկ մանկավարժներին՝ հաջողություններ իրենց շնորհակալ աշխատանքում:

21-րդ դարը գիտելիքի դար է, պետությունը ուժեղ է իր կրթված քաղաքացիներով: Համոզված ենք, որ ուսումնառության տարիները մեր դպրոցականների համար կդառնան իրենց ունակությունների դրսևորման, գիտելիքների ձեռք բերման պատասխանատու և կարևոր շրջան, որի արդյունքում մենք կունենանք հայրենասեր, կրթված և բարեկիրթ քաղաքացիներ:

Մաղթում ենք բոլորին առողջություն, ուժ, կորով և հաջողություններ իրենց նախաձեռնություններում:

Նոր ուսումնական տարվա առաջին օրը դպրոցականներին ողջունեց Սուրբ Սարգիս Եկեղեցու քահանա Տեր Շնորհք Բաղդասարյանը: Նա ամփոփեց իր խոսքը "Սերմնացան" առակով: Ըստ որի սերմն ընկնելով տարբեր տեղեր տալիս է տարբեր արդյունքներ: Քարի վրա ընկնելով այն արմատ չի տալիս, ավազի վրա՝ թույլ արմատներ է ունենում, իսկ պարարտ հողի վրա՝ փարթամ բերք է տալիս: Գիտելիքը նման է սերմին, երեխաների ուշադրությունը հողին: Հողը պարարտ պահենք, որպիսզի գիտելիքն աճի ու բազմապատկվի:

Այս եռամսյակն ավարտվեց հոգաբարձուների կողմից կազմակերպված տարեմուտի երեկոյով, որին մեծ հաճույքով մասնակցեցին, ուսուցչուհիները, ծնողական յանձնախմբի անդամները և հոգաբարձուները:

As usual, on the first day of School, Fr Shnork attended the Kevork Tahta Armenian Community Sunday School to convey his blessings to the pupils, staff and parents. He also discussed the Parable of the Sower and interpreted it to the pupils. He explained that the seeds are the words of God and Jesus said “they who have ears, let them hear.” “A man’s reception of God’s Word is determined by the condition of his heart.” In other words “Not all who hear listen and not all who listen follow.”

Թարգմանչաց Տոն

Յուրաքանչյուր ժողովրդի կյանքում հսկայական դեր ու նշանակություն սեփական գրի գոյությունը: Դա ազգի գոյատևման նախապայմաններից մեկն է: Այդ իսկ պատճառով էլ Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Պարթևին և 5-րդ դարի հայոց արքա Վռամշապուհին հաջողվեց իրականացնել այբուբենի ստեղծման գործը, որից հետո սկիզբ առավ մի հզոր շարժում, որն էլ ընդունված է անվանել թարգմանչաց շարժում: Ի նշան այս շարժման, հայոց իրականության մեջ, դարեր շարունակ այն նշվել է ծիսական տոնակատարությամբ և՛ եկեղեցում, և թե՛ աշխարհիկ կյանքում:

Գևորգ Թահթայան վարժարանն ինչպես միշտ, այս տարի էլ նշեց Թարգմանչաց տոնն ամենայն լրջությամբ ու բարձր արվեստով: Վարժարանի աշակերտությունը գեղեցիկ արտասանություններով ու իրենց մտքերով ներկայացրեցին Թարգմանչաց Տոնի խորհուրդը, որը հանդիսատեսի կողմից ընդունվեց ողջույնի ջերմ ծափահարություններով:

Այս գեղեցիկ, հակիրճ ձեռնարկի պատասխանատուներն էին Տիկ.Ժենյա Ներսիսյանն ու Տիկ Լենա Գիլլխանճեանը:

Ճանաչել զիմաստութիւն և զխրատ,
իմանալ զբանս հանճարոյ

Celebrating our Language

On October 18th, pupils of all ages participated in a special assembly dedicated to Mesrob Mashtots' creation of the Armenian Alphabet, the translators and our literary predecessors. The pupils sang and recited poems in celebration of the Armenian culture which is considered to be the most essential element in the existence of our nation. The programme was prepared by Mrs Jenya Nercessian and Mrs Lena Kulkhanjian delivered the opening speech about Mesrob Mastots' background and the events that motivated him and led to the creation of the unique Armenian Alphabet.

Վարժարանի Ծնողական Ընդհանուր Ժողով

Նոյեմբերի 22-ին տեղի ունեցաւ վարժարանի ծնողական ընդհանուր ժողովը։ Վարժարանի խնամակալութեան ատենապետ, հոգաբարձուների խորհրդի քարտուղար Դկտ Գառնիկ Թարվերդին ծնողներին ներկայացրեց նախորդ ժողովի ատենագրութիւնը։ Վարժարանի տնօրինուհի Տիկ Ռուզաննա Թաթուլեանը ներկայացրեց վարժարանի կրթական վիճակը, ինչպէս նաև 2014-2015 ուսումնական տարուայ ընթացքում կատարուած աշխատանքները և 2015-2016 ուսումնական տարուայ ընթացքում նախատեսուած աշխատանքները։ Վարժարանի խնամակալութեան և հոգաբարձուների խորհրդի գանձապահ Պրն Պետրոս Ասլանեանը ներկայացրեց 2014 - 2015 ուսումնական տարուայ ֆինանսական վիճակը։

Ծնողական յանձնախմբի փոխ ատենապետ Տիկ Սեանա Ղարախանեանը ներկայացրեց 2014-2015 ուսումնական տարուայ ընթացքում ծնողական յանձնախմբի կատարած աշխատանքները։ Վարժարանի հոգաբարձուների խորհրդի ատենապետ Տիկ Հերմինէ Չրչեանը և հոգաբարձու Տիկ Ռիթա Բարսեղեանը պատասխանեցին ծնողներին հետաքրքրող հարցերին։

Դպրոցէն ներս ունինք "Առաջարկներու Տուփ" մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ։

Սասունցի Դաւիթ Էպոսի ներկայացումը

Շաբաթ, 12 դեկտեմբեր 2015-ին Նաւասարդեան կեդրոնում հանդիսատէսների կոկիկ բազմութեան առջեւ ելոյթ ունեցաւ Գէորգ Թահթաեան Ազգային Վարժարանի բազմամեայ դերուսոյց Ժենիա Ներսիսեանը՝ մենաներկայացմամբ ներկայացնելով Յովհաննէս Թումանեանի «Սասունցի Դաւիթ»-ը: Մեծ Եղեռնի 100-ամեակին նուիրուած այս միջոցառումը կազմակերպուել էր Ազգային Վարժարանի եւ Բրիտանահայ համայնքային խորհրդի մշակութային յանձնախմբի կողմից: Հայաստանի Հանրապետութեան վաստակաւոր դերասանուհի Ժենիա Ներսիսեանը իր երկարամեայ թատերական բեղուն գործունէութեան համար արժանացել է Հանրապետութեան մեդալների եւ թատերական մրցանակների դափնեկիր է:

ԺԹ (19-րդ) դարում անխոնջ բանահաւաք Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանի կողմից յայտնաբերուած Սասնայ ծռերը դուրս գալով իրենց տեղական նեղ շրջանակից՝ կարճ ժամանակում դարձան բովանդակ հայ ժողովրդի սեփականութիւնը: Հայկական դպրոց յաճախող բոլոր փոքրիկների համար բանաւոր աւանդուած այս եզակի դիւցազներգութիւնը խթանեց նրանց մէջ հայ ինքնութեան գաղափարը եւ հանդիսացաւ նրանց ամենասիրելի պատումներից մէկը: Իսկ Սասնայ ծռերի գլխաւոր «ծուռ»-ը՝ Դաւիթը, հայ մանուկների մտքում դարձաւ հայ հերոսի կերպարի մարմնացումը: Դիւցազներգութիւնը ներշն-չանքի աղբիւրն էր Թումանեանի «Սասունցի Դաւիթ» ստեղծագործութեան համար, որը շնորհիւ Ժենիա Ներսիսեանի տաղանդի կեանք առաւ այդ երեկոյ եւ ոգեւորեց ներկաներին:

Ամանորի Հանդէս

Դեկտեմբերի 13-ին տեղի ունեցաւ Գ Թահթա Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի Ամանորին և Սուրբ Ծնունդին նուիրուած հանդէսը: Հանդէսին ներկայ էին Բրիտանահայ Համայնքի հոգևոր առաջնորդ Հովակիմ սրբազանը, Բրիտանահայ Համայնքային Խորհրդի ատենամետ պրն Արա Փալամուդեանը:

Ծնողական յանձնախումբը պատրաստել էր համեղ կերակուրներ բոլորի համար:

Հանդէսը սկսուեց վարժարանի տնօրէնուհի տիկ Ռուզաննա Թաթուլեանի ողջոյնի խօսքով: Նա բարի գալուստ մաղթեց և շնորհաւորեց բոլորին Նոր տարուայ և Սուրբ Ծննդի առթիւ, մասնաւորապէս ասաց. " Շնորհաւորում եմ բոլորիս Ամանորի և Սուրբ Ծնունդի առթիւ: Ցանկանում եմ, որ գալիք 2016 թուականը մեր պետութեան և համայն հայութեան համար լինի նշանակալի յաջողութիւնների, նորանոր ձեռքբերումների և բարօրութեան տարի: Մաղթում եմ բոլորիդ առողջութիւն, յաջողութիւն, նպատակների ու ցանկութիւնների իրականացում և ամենայն բարիք":

Տնօրինուհին շնորհակալութիւն յայտնեց վար-ժարանի բոլոր բարերարներին, հոգաբարձուներին, ծնողական յանձնախմբի անդամներին, բոլոր նախկին և ներկայ ծնողներին, որոնց օգնութեամբ իրականացնում են բազմաթիւ ձեռնարկներ ի նպաստ վարժարանի:

Այնուհետև ելոյթ ունեցան աշակերտները: Նրանք ներկայացրին "Յիսուսի ծնունդը", "Ճպուռն ու մրջիւնը", "Պապն ու շաղգամը" բեմադրութիւնները: Երգչախումբը հրաշալի կատարեց Ամանորին նուիրուած երգեր: Երեխաները խանդավառութեամբ դիմաւորեցին Ձմեռ Պապիկին, երգեցին, պարեցին, զուարճացան:

Բրիտանահայ Համայնքի հոգևոր առաջնորդ Հովակիմ սրբազանը փոխանցեց իր օրհնանքի խօսքը ներկաներին:

Վերջում Ձմեռ Պապիկը երեխաներին նուերներ բաժանեց :

Հանդէսը վարում էր վարժարանի ուսուցչուհի Անուշ Գեղամեանը:

On 13th December K. Tahta Armenian Community Sunday School had its New Year celebration. The event was attended by Bishop Hovakim Hovhannisyan, spiritual leader of the community, Mr Ara Palamoudian, chairman of the Armenian Community Council.
The celebration was opened with a speech from the head teacher, Mrs Ruzanna Tatulian, who welcomed guests and parents, wishing all health and a prosperous New Year "I wish you all a Happy New Year and a Merry Christmas. Let 2016 be a year of remarkable success, aspirations and achievements for our Homeland and for the entire Armenian nation all over the world." She thanked all benefactors of the School, members of the governing body, the parents' committee, and all other parents who have helped the school fulfil its program for the benefit of the school.
During the event, students performed various recitations and plays, including "The nativity", "The ant and the grasshopper" and "The enormous turnip". The choir sang Christmas songs, before the children greeted with joy and excitement Father Christmas, who handed gifts to all children present.
The spiritual leader of the Community, Bishop Hovakim Hovhannisyan passed his blessing to all those present. The event was led by teacher, Anoush Gegamyan.

Շնորհակալագիր

ՀՀ դեսպանության աշխատակից պրն. Տիգրան Գալստեանը պատուգիրն յանձնեց դպրոցին

Հանդէսների դերն ու նշանակութիւնը Գ. Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանում

Հանդէսները կազմում են դպրոցի կրթական մասը: Երեխաները հանդէսների պատրաստման ընթացքում կատարում են հայերէն լեզուով լսելու, լսածը հասկանալու, արտայայտուելու և խօսելու վարժութիւններ, երեխաների մէջ զարգացնում է վստահութիւն, ինքնուրոյն արտայատուելու կարողութիւն:
Հանդէսների միջոցով երեխաները սովորում են, վարժւում են թիմային աշխատանքի:
Հանդէսների ընթացքում աշակերտները իրենց պատկերացնում են տւեալ թեմայի հանգամանքների իրականութեան մէջ, որն ամրապնդում է տւեալ նիւթի իւրացման մակարդակը՝ տալով դրան զգացական որակ:
Հանդէսի ընթացքում տարբեր դասարանի աշակերտներ շփւում են միմեանց հետ, որի միջոցով ամրապնդւում է դպրոցի մեծ ընտանիքի միասնութիւնը:
Այս բոլորին աւելացնեմ, որ աշակերտները սովորում են հայոց պատմութեանը, գրականութեանը և մշակոյթին վերաբերւող նիւթեր:
Վերջին 5 տարիների ընթացքում դպրոցում Ամավերջի հանդէսների ժամանակ ներկայացրել ենք հետևեալ լուրջ թեմաները.

- Տիգրան Մեծ աշխարհակալ տիրակալ
- Բագրատունների Անի մայրաքաղաքը.
- “Հեքիաթների աշխարհում”, որտեղ ներկայացրինք Յովհ. Թումանեանի հեքիաթները.
- Դանիէլ Վարուժանի և Պարոյր Սևակի կեանքն ու ստեղծագործութիւնները
- “Սասունցի Դաւիթ” էպոսը.

Մասնակցելով այս հանդէսներին երեխաների մօտ զարգանում է հպարտութիւն սեփական ժողովրդի պատմութեան նկատմամբ:

The role and significance of Handesner in K Tahta Armenian Community Sunday School

Handesner are part of our educational program and these are done for our students. As part of preparation for handesner, children are involved in listening and speaking exercises in Armenian. This helps improve their speaking skills, raise confidence, improve communication abilities and provides them with the opportunity to express themselves. In addition, handesner help our students develop their team working skills.

During handesner children from different classes have the opportunity to communicate with each other. Children also learn material related to Armenian history, literature and culture.

In the last 5 years during our End of the Year Assembly, we have presented the following significant programmes:

- Tigran the Great, king of Armenia.
- The oldest capital of Armenia.
- The world of fairy tales, where different classes presented fairy tales from Hovhaness Tumanian.
- The biographies and poems of Daniel Varoujan and Paruyr Sevak.
- Last year we presented the epic poem <David of Sasoun>.

Through participation in handesner we try to develop in our students a sense of pride in our nation and history.

2015-2016 Տարեշրջան

Առաջին Եռամսեակ 06 Սեպտ. 2015 – 13 Դեկտ. 2015 Term I 06 September 2015 – 13 December 2016	
06 Սեպտեմբեր 06 September	Վերամուտ Back to school
18 Հոկտեմբեր 18 October	Մշակոյթի Օր - Թարգմանչաց Տօն Culture Day
25 Հոկտեմբեր 25 October	Արձակուրդ Half-Term Break
22 Նոյեմբեր 22 November	Ծնողական Ընդհանուր Ժողով Parents' Meeting
13 Դեկտեմբեր 13 December	Նոր Տարուայ Հանդէս New Year's Celebration
Երկրորդ Եռամսեակ 10 Յունուար 2016 – 13 Մարտ 2016 Term II 10 January 2016 – 13 March 2016	
27 Փետրուար 27 February	Ընդհանուր Գիտելիքներու Մրցում Quiz Night
14 Փետրուար 14 February	Արձակուրդ Half-Term Break
21 Փետրուար 21 February	Վարդանանց Տօն St Vartan's Day
06 Մարտ 06 March	Մայրերու Օր Mothers' Day
13 Մարտ 13 March	Զատկուայ Հանդէս Easter Celebration
Երրորդ Եռամսեակ 03 Ապրիլ 2016 – 10 Յուլիս 2016 Term III 03 April 2016 – 10 July 2016	
17 Ապրիլ 17 April	Գեղարուեստի Օր Art Workshop
24 Ապրիլ 24 April	Ցեղասպանութեան Նուիրուած Ձեռնարկ Genocide Memorial Day
22 Մայիս 22 May	Մարզական Օր Sports' Day
24 Մայիս 24 May	Արձակուրդ Half-Term Break
26 Յունիս 26 June	Դաշտահանդէս School BBQ
10 Յուլիս 10 July	Ամավերջի Հանդէս End of Year Assembly

Խմբագիրներ՝ Տիկ Այիդա Եղիկեան, Տիկ Ռուզաննա Տէր Յովհաննիսեան, Տիկ Արմինէ Սարգսեան, Տիկ Գայանէ Յակոբեան, Տիկ Նայիրի Ստեփան Սարգսեան
Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան
Էջադրում՝ Տիկ Լենա Գիւլխանճեան